ՔԱՍԱԽ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

14. ապրիլի 2014թվ.

Գ. Քասախ

Ժ 11 ^{00} –ին կայանալիք 22 Կոտայքի մարզի Քասախ գյուղական համայնքի ավագանու 2014թվ. ապրիլի 14–ի 3-րդ հերթական նիստը սկսվեց ժամը 11^{00}-ին՝ այդ պահին նիստին ներկա էին ավագանու հինգ անդամներ և մինչև 11^{30} նիստին անհարգելի պատճառով չներկայացան ավագանու հետևյալ հինգ անդամները՝ Էդգար Մկրտչյանը, Գագիկ Թովմասյանը, Տարոն Թովմասյանը, Միքայել Սահակյանը, Նորիկ Հարությունյանը:

Այսպիսով՝ քվորում չապահովվեց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քասախ համայնքի ավագանու անդամներ Միքայել Սամվելի Սահակյանը և Էդգար Սահակի Մկրտչյանը 2013թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի ապրիլի 1-ը ընկած ժամանակահատվածում Քասախ գյուղական համայնքի ավագանու 11 նիստերից 7-ին անհարգելի պատճառներով բացակայել են, ինչպես նաև իրենց հավուր պատշաճի տեղյակ պահելուց հետո չեն ներկայացրել որևէ հարգելի պատճառ՝ իրենց բացակայությունների համար, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասից, ըստ որի համայնքի ավագանու նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների օրենքով սահմանված թվի կեսից ավելին, ինչպես նաև այն փաստից, որ շուրջ մի քանի ամիս է ավագանու նիստ չի կայանում՝ ավագանու վերը նշված անդամների անհիմն չներկայանալու պատճառով, որը հանգեցնում է ավագանու սահմանված թվի կեսից ավելի անդամների բացակայությանը՝ ավագանու 2014թվականի ապրիլի 14-ի N3 հերթական նիստը իրավազոր չէ, ուստի նիստը գումարելը անհնարին է:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Քասախ գյուղական համայնքի ավագանու 2014թվականի ապրիլի 14-ի N3 հերթական նիստին ներկա ավագանու ներքո ստորագրյալ անդամներս

Արձանագրում ենք

1. Քվորումը չապահովելու պատճառով 2014թվականի ապրիլի 14-ի N 3 հերթական նիստը չկայացած համարել:

2. Քասախ գյուղական համայնքի ավագանու անդամներ Միքայել Սամվելի Սահակյանի և Էդգար Սահակի Մկրտչյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:

Ավագանու ներկա անդամներ՝ Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ղ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ